ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 1877-1878թթ.

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ

Հայկական հարցի հետազոտությունը, որպես միջազգային ասպարեզում տաճկահայերի ազատագրման դիվանագիտական խնդիր, միշտ էլ եղել է հայ պատմագիտության ուշադրության կենտրոնում: Այդուհանդերձ, մինչև այժմ սակավ ուսումնասիրված են համարվում ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմի ժամանակ Օսմանյան Թուրքիայի հայ հպատակների շահերի պաշտպանության հանդեպ Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդների դիրքորոշման, Էջմիածնի Մայր աթոռի և Կոստանդնուպոլիսի պատրիարքության առանձնահատուկ մոտեցումների հարցերը:

1877թ. ապրիլի 12/24/-ին սկսված ռուս-թուրքական պատերազմը Հայոց եկեղեցու ղեկավարներին կանգնեցրեց ազգային արժեքների հաշվառման, սուլթանի հայ հպատակների շահերի պաշտպանության, պատերազմի հնարավոր արդյունքների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտման խնդրի առջև: Հարկ էր ազգային ակնկալիքները համաձայնեցնել մեծ տերությունների շահագրգռությունների հետ: Պետք էր հաշվի նստել քաղաքական բարդ իրավիճակի հետ, երբ հայերի հոգևոր կենտրոնը՝ Էջմիածինը, գտնվում էր ռուսական սահմանների ներսում, իսկ թուրքականում՝ հայկական չորս՝ Կոստանդնուպոլսի, Երուսաղեմի, Սսի և Ախթամարի պատրիարքությունները:

1877թ. մարտին Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար, գեներալ-ադյուտանտ Մ. Տ. Լորիս-Մելիքովը այցելեց Էջմիածին՝ ստանալու հայ եկեղեցու առաջնորդ Գևորգ Դ-ի կոնդակը, որպեսզի տաճկահայերը չընդդիմանան ռուսական ստորաբաժանումներին: Հայրապետը, վկայակոչելով Հայաստանում առաջխաղացող ռուսական զորամիավորումների հետ տաճկահայերի համագործակցության դառը փորձը, հրաժարվեց օրինականացնել գոյություն ունեցող հարաբերությունները՝ որպես արևմտահայ հոտի կյանքի համար վտանգավոր հետևանքներով հղի: Հայտարարվեց առերևույթ չեզոքություն. «Ինձ՝ կաթողիկոսիս, հարկ չկա մտնել քաղաքական խաղերի մեջ»:[1] Գևորգ Դ-ի այդ զգուշավոր դիրքորոշումը նպատակ ուներ հայ ժողովրդի արևմտյան հատվածին զերծ պահել ճնշումներից ու հալածանքներից:[2]

Կաթողիկոսի դիրքորոշումը թելադրված էր ռուսական միապետության արտաքին քաղաքականության մոտեցում-

ների իմացությամբ: Պետերբուրգյան արքունիքն Իլդիզ-Քիոսից 1876թ. պահանջների մինիմում ծրագրի շրջանակներում նախատեսում էր բալկանյան սլավոնների՝ Չերնոգորիայի, Սերբիայի, Բուլղարիայի, Հերցեգովինայի և Բոսնիայի կարգավիճակի լուծում, ինչպես նաև Օսմանյան Թուրքիայի այլ տարածքների քրիստոնյաների վիճակի բարելավում: Զինվորական գերատեսչության ղեկավար Դ. Ա. Միլյուտինի «ռազմական նկատառումները» Եվրոպական թատերաբեմի հնարավոր անհաջողությունները փոխհատուցելու համար Փոքրասիական ճակատում եռանդուն գործողություններ էին նախատեսում. «Անկասկած, պատերազմի միջոցով ցանկացած հարցի լուծում մեզ համար կախված կլինի մեր հաջողություններից կամ անհաջողություններից Կայսրության արևմուտքում, որից էլ բխում է Ասիական Թուրքիայի համառ ու անխոնջ գործունեության անհրաժեշտությունը, որպեսզի հաշտության կնքման դեպքում Արևմուտքի մեծ անհաջողությունները լրացվեն Արևելքի ձեռքբերումներով»:[3] Մոտեցումը թելադրվում էր 1828-1829թթ. և 1854-1856թթ. ռուս-թուրքական պատերազմների փորձով: Թուրքիայի ասիական տիրույթների ազգաբնակչությունը հաշվվում էր 16,5 միլիոն մարդ, որից, 1844 թվականի տվյալներով, 1,5 միլիոնը կազմում էին հայերը: Ռազմական գործողությունների այդ նախագիծը ենթադրում էր Թուրքահայաստանի գրավումը՝ Էրզրում վարչական կենտրոն քաղաքով: Պետերբուրգյան արքունիքի հաշվարկներում հաջող ռազմական ձեռքբերումները պետք է դառնային քաղաքական մանրադրամ:[4]

Սկսված ռազմական գործողություններն ուղեկցվում էին թուրքական վարչակարգի՝ Ալաշկերտի, Բայազետի և Վանի հայության նկատմամբ հալածանքներով: Ռուսահայերի մեջ գլուխ բարձրացրեց ազգակիցներին օգնելու համար միջոցների հանգանակման շարժումը: Միևնույն ժամանակ, Ռուսական կայսրության հայերի հասարակական միտքը Հայկական հարցի լուծման պարագայում անհրաժեշտ էր համարում Պետերբուրգյան արքունիքի միջամտությունը: 1878թ. հուլիսին Թիֆլիսի հայկական համայնքը, ազատական գործիչ Գրիգոր Արծրունու գլխավորությամբ, դիմեց Ալեքսանդր 2-րդ ցարին՝ տաճկահպատակ հայերի վիճակի բարելավման գործին աջակցելու խնդրանքով: Հայտարարվեց հաղթական Ռուսաստանի ուժի հետ տաճկահպատակ հայերի փրկության բոլոր հույսերը կապելու մասին:[5] Համանման միջնորդություն ձեռնարկեց Բաքվի հայկական համայնքը. «Վերջ դնել թուրքահայերի ճնշումներին և նրանց վրա տարածել այն նույն ազատությունը, որը երաշխավորվելու է Թուրքիայի սլավոնական ժողովուրդների համար». ասվում էր նրանց դիմումում:[6] Բաքվի հայկական համայնքի առաջարկությունը Հայկական հարցը Բալկանյան թերակղզու սլավոնների օրինակով դնում էր լուծման իրական հարթության վրա: Հայկական հարցի լուծման քաղաքական ծանրակշիռ ատյան էր դիտվում Էջմիածնի Մայր աթոռը: Բաքվի հայությունը Գևորգ Դ-ին հղեց համապատասխան խնդրագիր. նրան նմանօրինակ միջնորդագրեր հղեցին նաև Նախիջևանի, Պյատիգորսկի, Քիշնևի, Աստրախանի հայկական համայնքները:[7] Երևանի նահանգի Դարալագյազի հայության 1877թ. օգոստոսի 10-ի նամակ-դիմումը գերագույն կաթողիկոսին հավաստում էր ցեղակիցների դժնդակ կացության մասին. «Մեր արյունակից եղբայրները Փոքր Ասիայում զոհ են դառնում բարբարոսների յաթաղանին, և քանի դեռ թշվառ Հայաստանը կմնա թուրքական գերիշխանության ներքո, հայերի

արյունը կհոսի»:[8] Հայոց եկեղեցու առաջնորդին առաջարկվում էր Ռուսական միապետության հայերի անունից Ալեքսանդր 2-րդ ցարին ներկայացնել միջնորդագիր, «տրպեսզի նորին մեծությունը, իր գթասրտությունը տարածելով հայերի վրա, նրանց արժանացնի այն իրավունքներին, որոնցից պետք է օգտվեն Թուրքիայի մյուս քրիստոնյաները...»:[9]

Ռուսական բանակի կողմից Կարսի գրավումը Գևորգ Դ-ին դրդեց 1877թ. նոյեմբերի 17-ին Կովկասի փոխարքա, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչին. «նշանավոր ամրոցի» ազատագրման և Ռուսաստանին հանձնելու հնարավորության կապակցությամբ հղել շնորհավորագիր:[10] Խնդրվում էր Կովկասի փոխարքայի աջակցությունը՝ հաշտության պայմանագրի կնքման ժամանակ Օսմանյան Թուրքիայի հայերի շահերի «խնամատարությունը» ստանձնելու պարագայում:[11] Ռուսաստանի Արտաքին քաղաքականության գերատեսչությունը հավանություն տվեց գերագույն կաթողիկոսի տեսակետին. «Հարկավ պետք էր և՛ խոսքով, և՛ գործով հանգստացնել, խրախուսել, պաշտպանել Էջմիածնի արտասահմանյան հոտին»:[12]

Ինչպես հայտնի է՝ ըստ 1856թ. մարտի 18/30-ի Փարիզյան համաձայնագրի, Բարձր Դուռը եվրոպական տերությունների առջև պարտավորվում էր «դարելավել բոլոր հպատակների վիճակը» `անկախ դավանանքից: Բարենորոգումների գործնական հսկողությունն իրագործվելու էր մեծ տերությունների կողմից:[13] 1863թ. մարտի 17-ին սուլթանը, Ֆրանսիայի և Անգլիայի արևելյան քաղաքական ազդեցության ներքո, հաստատեց «Հայոց Ազգային սահմանադրությունը»: Այն նախատեսում էր Ազգային ժողովից և Ազգային հոգևոր ժողովից կազմված Ազգային վարչության ստեղծում: Այդ փաստաթղթով հայերն աշխարհիկ և հոգևոր ոլորտներում ինքնակառավարման իրավունք և «ներքին գործերը» վարելու հնարավորություն էին ստանում: Կոստանդնուպոլսի պատրիարքը դիտվում էր որպես ազգի գերագույն ներկայացուցիչ.[14] «Կոստանդնուպոլսի Պատրիարքը բոլոր Ազգային ժողովների նախագահն է, վարում է նրանց գործադիր իշխանությունը և, մասնավոր պարագաներում, Տերության հրամանների գործադրման միջնորդն է... Ազգային ժողովին իրավունք էր վերապահվում նաև ընտրել Սբ. Երուսաղեմի պատրիարք, որը Սբ. Հակոբի Աթոռի ցմահ գահակալն է, Երուսաղեմում գտնվող ամբողջ Հայոց Ազգին պատկանող ուխտատեղիների տնօրենն ու Սբ. Հակոբի վանքերի Միաբանության Նախագահը և որի վախճանվելու դեպքում Միաբանությունն իր միջից Տեղապահ է ընտրում, և Ազգային ժողովները հաստատում են»:[15] Կոստանդնուպոլսի պատրիարքարանի կարգավիճակի առաջնությունը՝ որպես Օսմանյան Թուրքիայում ազգային քաղաքական ատյան, ճանաչեցին նաև Ախթամարի և Սսի պատրիարքները:

Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականությունը հակված էր Թուրքիայում պահպանելու ստատուս-քվոն, այն դիտարկվելով՝ «Եվրոպական հավասարակշռության և ընդհանուր խաղաղության պահպանության» երաշխիք:[16] Միաժամանակ, Ֆրանսիայի և Անգլիայի միջև ներքին պայքար էր գնում Օսմանյան Թուրքիայի հայերին յուրաքանչյուրն իր ազդեցության ոլորտում պահելու համար: Փարիզն իր ազդեցության գործիք էր ընտրել իր իսկ կողմից Կիլիկիայում ստեղծած կաթոլիկական հայ պատրիարքությունը՝ Հասունյանի գլխավորությամբ, որը եպիսկոպոս էր ձեռնադրվել Հռոմում: Կաթոլիկ պատրիարքն իր փաստաթղթերում իրեն կոչում

էր Հայոց եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորչի «հետնորդ», իր եկեղեցին կոչում էր Հայկական, աշխատում էր թաքցնել Հայոց Առաքելական ուղղափառ եկեղեցու դավանանքից շեղումները: Օսմանյան Թուրքիայի հայերի վրա Հասունյանի ազդեցությունը մեծացնելու միտումով նրա աթոռանիստը տեղափոխում է Կոստանդնուպոլիս:[17] Նպատակ էր դրված հայերին ամբողջությամբ ենթարկել կաթոլիկական Հռոմին և կաթվածահար անել Ռուսաստանի քաղաքական գործիք դիտվող Էջմիածնի Մայր աթոռի հոգևոր ազդեցությունը:[18]

Անգլիան ավելի լայնածավալ էր գործում: Նա ուշադիր հետևում էր Օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանյան միապետության հայերի վիճակին, Կոստանդնուպոլսի պատրիարքարանի և Էջմիածնի Մայր աթոռի դիրքորոշումներին՝ դեպի իրենց երկրների կառավարությունները: Իրականացվում էր հին Հայաստանի գիտաքաղաքական պատմության, ինչպես նաև քրիստոնյա Հայաստանի դրության ուսումնասիրություն:[19] Այս պայմաններում Սենտ-Ջեյմսի կաբինետն իր նպատակների համար միջնորդ ընտրեց Կոստանդնուպոլսում ստեղծված Հայոց բողոքական պատրիարքարանը և հասարակական-քաղաքական«Երիտասարդ Հայաստան» շարժումը՝ խրախուսելով հայության հոգևոր կենտրոնը Էջմիածնից Կոստանդնուպոլիս փոխադրելու նրա ցանկությունը: Երուսաղեմի և Հնդկաստանի, Կոստանդնուպոլսի և Արևմտահայաստանի հայերի մեջ փնտրվում էին Անգլիայի քաղաքական շահերը պաշտպանել կարողացող հոգևոր անձինք:[20] Վիճակը բարդանում էր Կոստանդնուպոլսում Էջմիածնի առաջնորդարանի լիազոր ներկայացուցչի բացակայությամբ:[21]

Տաճկահայերի Ազգային ժողովի՝ որպես քաղաքական ինստիտուտի, ստեղծման պայմաններում, Կոստանդնուպոլսի պատրիարքարանը ձգտում էր պահպանել իր առաջատար դերը հասարակական կյանքում: Կոստանդնուպոլսի պատրիարք Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ Ազգային ժողովն ստեղծեց Հայկական հարցն ուսումնասիրող հանձնաժողով՝ Ներսես Վարժապետյանի գլխավորությամբ: Սեպտեմբերի ութին Ազգային ժողովը Մահմուդ 5-րդին և թուրքական կառավարությանը ներկայացրեց զեկույց, որը մնաց անպատասխան:[22]

Ռուսական զորամիավորումների առաջխաղացումը դեպի Օսմանյան Թուրքիայի ասիական տարածքների խորքը՝ խորհելու առիթ տվեց Ազգային ժողովին և Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանին:[23] 1877թ. հոկտեմբերի 21-ին Ազգային ժողովի պատգամավորների գաղտնի խորհրդակցությունում ընդունվեց Ալեքսանդր 2-րդ ցարին ուղղված գրավոր դիմում՝ Հայկական հարցի լուծման երեք տարբերակներով. 1. Արևմտյան Հայաստանն ընդգրկել Ռուսական կայսրության կազմի մեջ, 2. Մեծ Հայքին վերապահել Բուլղարիայի կարգավիճակը, 3. Տաճկահայաստանում իրականացնել վերահսկվող բարեփոխումներ: Ըստ առաջին տարբերակի առաջարկվում էր Մեծ Հայքի՝ մինչև Եփրատ տարածքը, որ ենթակա էր Երևանյան նահանգի հետ միավորմանը, պահել Ռուսաստանի կազմում: Համաձայն երկրորդ տարբերակի, Ալեքսանդր 2-րդ ցարի՝ Արևմտյան Հայաստանում տարածքային ձեռքբերումներ ունենալու պատրաստակամության բացակայության դեպքում խնդրվում էր Թուրքիայի հայերին ընձեռել Բուլղարիայի համար արված բոլոր արտոնությունները: Անշուշտ այստեղ հաշվի էր առնվել ռուս-թուրքական պատերազմի պատճառների ու նպատակների վերաբերյալ 1876թ. ապրիլի

5-ին կանգնել Ա. Մ. Գորչակովի՝ եվրոպական երկրներում Ռուսաստանի դեսպաններին հղած շրջաբերականը, ուր խոստովանվում էր Թուրքիայում Ռուսաստանի և Եվրոպայի «խաղաղարար» բոլոր ջանքերի ապարդյունությունը և առաջարկվում էր պարտադրել սուլթանական կառավարությանը՝ միջոցներ ձեռնարկել «քրիստոնյա ազգաբնակչության վիճակի բարելավման» համար:[24]

«Բուլղարական կարգավիճակը» փաստորեն նշանակում էր Ռուսաստանի կողմից Թուրքիայի հայ ազգաբնակչությանը տալ վարչական ինքնավարության թույլտվություն: Երրորդ տարբերակում նախատեսվում էր ռուսական զորքերի հսկողության տակ հայ ազգաբնակչության վիճակի բարելավմանն ուղղված բարեփոխումների անցկացում:

«Հայոց երազանքները» Ալեքսանդր 2-րդ ցարին հասցնողի դերը ենթադրվում էր հատկացնել Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ին: Շարադրված պահանջների ներկայացումը հանձնարարվեց ծայրագույն վարդապետ Ն. Տեր-Բարդուղյանին: Ամենայն Հայոց կաթողիկոսին առաջարկվեց բացահայտորեն կանգնել ազգի շահերի պաշտպանության կողմը՝ առանց հաշվի առնելու ինչպես Ռուսաստանյան միապետության, այնպես էլ Օսմանյան Թուրքիայի հայերի համար հնարավոր հետևանքները: Այս համատեքստում անհրաժեշտ էր համարվում ազդել Կոստանդնուպոլսի պատրիարքի վրա:

1877թ. նոյեմբերին Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանը եպիսկոպոսների հետ մասնավոր խորհրդակցություն անցկացրեց, որի ժամանակ նա, քննադատելով Ներսես Վարժապետյանի կողմնորոշումը, առաջարկեց կատարել հոգևոր նոր առաջնորդի ընտրություն: Դրա անհրաժեշտությունը պատճառաբանվում էր ազգային քաղաքականության «նոր ուղղությունը» կյանքի կոչելու ձգտումով: Նախկին և գործող պատրիարքների փոխհարաբերությունների ծայրահեղ կողմնորոշումների դեմ ելույթ ունեցավ եպիսկոպոս Մատթեոս Իզմիրլյանը, որն առաջարկեց իրականացնել միջնորդական առաքելություն: Նոր մոտեցման կողմնակիցների փաստարկները շարադրվեցին Կոստանդնուպոլսի պատրիարքին: Եպիսկոպոսների «խոռվությունը», իսկ ավելի շուտ՝ ռուսական հաղթական զենքի, ժամանակների պայմանների փոփոխության գիտակցումն իր ներգործությունն ունեցավ:[25] Ներսես Վարժապետյանը հայտարարեց. «Ուր որ ազգի ճշմարիտ շահերն են, ես միշտ այնտեղ եմ»:[26]

Արևմտյան Հայաստանի ապագայի վերաբերյալ Ներսես Վարժապետյանի և Ազգային ժողովի դիրքորոշումը որոշակի «աշխուժություն» մտցրեց Մշուշապատ Ալբիոնի դիվանագիտության մեջ: Կոստանդնուպոլսում Անգլիայի դեսպան Հ. Լեյյարդը 1877թ. դեկտեմբերին Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրեց Մենտ-Ջեյմսի կաբինետի խնամակալությամբ ինքնավարության առաջարկը: Ազգային ժողովը, հաշվի առնելով նախորդ փորձը, երբ Անգլիական կառավարությունը 1876թ. Կոստանդնուպոլսյան գագաթնաժողովում այդպես էլ առաջ չքաշեց Տաճկահայաստանի՝ Բուլղարիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի օրինակով ինքնավարության գաղափարը, անցանկալի համարեց միակողմանի կողմնորոշումը դեպի Անգլիան: Հանդես բերելով դիվանագիտական զգուշավորություն, Ազգային ժողովը Թուրքիայի հայերի վիճակին համապատասխան ճանաչեց Անգլիայի կողմից առաջ քաշված ինքնավարության գաղափարը: Իսկ իր՝ դեսպան Լեյյարդի առաջարկը գնահատվեց որպես «անգլիական բանսար-

կություն», որ կոչված էր բախումնային իրավիճակ ստեղծել հայերի՝ Օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանյան միապետության հետ հարաբերություններում: Կայացվեց փոխզիջումային որոշում՝ Թուրքիայի հայերի վիճակի բարեփոխման համար քանակցություններ վարել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի հետ՝ դրանց բովանդակության մասին տեղեկացնելով սուլթանական կառավարությանը, որը շահագրգռված էր առաջատար երկրների մտադրությունների հաշվարկների ճշտմամբ:[27]

Ինչպես հայտնի է՝ 1878թ. հունվարի 19-ին Աղրիանուպոլսում Օսմանյան Թուրքիայի և ռուսական բանակի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր:[28] Ռուսաստանի դիրքորոշումը պարզելու համար Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը դիմեց Աղրիանուպոլսի առաջնորդական տեղապահ Գևորգ Բուշչուգուլյանի միջնորդությանը, որը հանդիպում ունեցավ հաշտության քանակցությունների համար լիազորված անձ՝ կոմս Ն. Պ. Իգնատևի հետ: Առաջնորդական տեղապահը մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին հանձնելով Ներսես Վարժապետյանի հանդիսավոր շնորհավորական նամակը,[29] Իգնատևին դիմեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին հարցապնդումով, որին հետևեց վերջինիս պատասխանը՝ հաշտության պայմանագրի հիմնահարցերի վերաբերյալ: Դրանք հաստատված էին Ալեքսանդր 2-րդ ցարի կողմից և ենթակա՝ ռուսական բանակի գլխավոր հրամանատարի գործադրությանը: Ինչպես հայտնի է՝ «Հաշտության հիմնահարցերը» ինքնավարության կարգավիճակ էին նախատեսում Բուլղարիայի, ինքնավարության պետական կառուցվածք՝ Բոսնյայի, «բավարար ապահովվածություն»՝ Հերցեգովինայի համար: Նախատեսվում էին բարենորոգումներ Եվրոպական Թուրքիայի քրիստոնեական տարածքներում և ռազմատուգանքի գանձում:[30] Իր իրավասությունների սահմաններում Իգնատևը տեղապահ Բուշչուգուլյանին հայտնեց Հայկական հարցի հույսերը ապագայի հետ կապելու մասին: Ինքնորոշման հասնելու համար մատնանշվում էր լուսավորչական, կազմակերպչական և քաղաքական քայլերի անցկացման անհրաժեշտությունը: Միաժամանակ, երկդիմի կերպով ընդգծվում էր ռուսական կողմնորոշման անհրաժեշտությունը. «Թող ձեր պատրիարքն առանց ժամանակ կորցնելու գործի անցնի»:[31]

Բուշչուգուլյանի 1878թ. հունվարի 20-ի զեկույցը Ներսես Վարժապետյանին դրդեց վերլուծելով իրավիճակը նոր քայլեր ձեռնարկել: Հունվարի 31-ին նա Ազգային ժողովի երկու փոխնախագահներ՝ Ստեփան Ասլանյանին և Հովհաննես Նուրյանին ուղարկեց Աղրիանուպոլիս՝ Կարմիր Խաչի հետ կապված հարցերում աջակցելու թուրքական լիազոր ներկայացուցիչներին: Իգնատևի հետ զրույցի ժամանակ Կոստանդնուպոլսի պատրիարքի երկու ներկայացուցիչները շարադրեցին Փոքր Ասիայի հայերի կրած պատուհասների և ճնշումների, ինքնավար Հայաստանի անհրաժեշտության, պատրիարքի՝ Ալեքսանդր 2-րդի անունով խնդրագիր ուղարկելու ցանկության մասին: Խնդրվում էր ինքնավարության կարգավիճակ տալ Մեծ Հայքի Էրզրում, Մուշ, Վան, Սվաս մարզերին, որոնք, բարեփոխումների իրականացման համար, պետք է գրավվեին ռուսական զորքերի կողմից: Իր պատասխանում Իգնատևը հարկ համարեց պատրիարքի ներկայացուցիչներին հիշեցնել, որ նրանք մինչ այս եղել են դեսպան Լեյյարդի անգլիական բանսարկության եռանդուն մասնակիցները և բացա-

տրություն պահանջեց: Ազգային ժողովի փոխնախագահները դա բացատրեցին որպես «Հայաստանի վերածննդի» ձգտումով թելադրված քաղաքական գործնական քայլեր և նշեցին, որ այս գործընթացում վճռական դեր կարող է խաղալ Ռուսաստանը:[32] Զրույցի վերջում Իգնատևը հայտարարեց, որ Կոստանդնուպոլսի պատրիարքի խնդրանքը հայտնել է մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին, որը խոստացել էր հարցում կատարել միապետին:[33] Իր կողմից Իգնատևն ընդգծեց, որ հաշտության պայմանագրի բովանդակության մեջ անհրաժեշտ է հայոց հոգևորականության և հայ բնակչության նկատմամբ Էջմիածնի Մայր աթոռի առաջնորդ լինելը Բարձր Դռան կողմից ճանաչելու կետ մտցնել: Ազգային ժողովի փոխնախագահների մեկնումից հետո 1878թ. փետրվարի 1-ին Ալեքսանդր 2-րդ ցարին հասցեագրված խնդրագրով և պատրիարք Ներսես Վարժապետյանի նամակով նոր պատվիրակություն ժամանեց Ադրիանուպոլիս: Նամակում Ներսես Վարժապետյանն իր անձնական երախտագիտությունն էր արտահայտում մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին՝ հայոց խնդիրների հանդեպ ունեցած ուշադրության համար: Խնդրագիրն, իր հերթին, ինքնակալից խնդրում էր Եվրոպական Թուրքիայի տարածքների նմանությամբ ինքնավարություն ապահովել Արևմտյան Հայաստանի համար: Օսմանյան Թուրքիայի հայ ազգաբնակչության անունից այն ստորագրել էին ինը եպիսկոպոսներ: Խնդրագիրը Իգնատևի կողմից հեռագրով ուղարկվեց արտաքին քաղաքական տեսչություն՝ հետագա գործելակերպի մասին հարցումով. «Շատ ավելի դժվար է, - գրում էր Իգնատևը, - խելքի բերել հայերին, որոնք նույնպես ճանձրացնում են ինձ իրենց խնդրանքներով և հաճախ կանգնեցնում են ինձ դժվար կացության առջև»:[34]

Իգնատևի և ռուսական բանակի գլխավոր հրամանատարի՝ Հայկական հարցի վերաբերյալ կողմնորոշման մասին հարցումը շուտով լուծում ստացավ: Կանցլեր Գորչակովը հեռագրեց Իգնատևին. «Ձեզ, անշուշտ, հայտնի է մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի՝ միապետի կողմից հաստատված առաջարկությունը՝ Հայաստանում նոր, սահմանափակ սահմանի անցկացման վերաբերյալ: Այս առաջարկությունը չի համապատասխանեցվում պատրիարքի [Ներսես Վարժապետյանի – Մ. Մ.] հույսերին ու սպասելիքներին: Երբ ապագա պայմանագրի հետ կապված որևէ հարց դժվարության առաջ է կանգնեցնում Ձեզ, սահմանափակվեք հայտարարությամբ, որ այն չի նախատեսված ձեզ տրված հրահանգներում և Պետերբուրգ ներկայացրեք սովորական ճանապարհով»:[35]

Հաշվի առնելով Կովկասի փոխարքայի կարծիքը, Գորչակովի պատասխանը որոշակիացրեց Ռուսաստանի դիրքորոշումը Փոքր Ասիայի տարածքային ձեռքբերումների վերաբերյալ: Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը օգտակար էր համարում Ռուսաստանին միացնել Բաթումին, Կարսի փաշայությունը և Բայազետը՝ որպես Ռուսաստանի ռազմաստրատեգիական և տնտեսական հետաքրքրությունները լուծելուն կոչված տարածքներ: Խնդիր էր դրված ստանալ ռազմավարական հենակետ, հեռացնել սահմանը Թիֆլիսից, բարեկամական հայ ազգաբնակչության հետ ունենալ սահմանակից տարածքներ, հսկել Էրզրում-Բայազետ-Թավրիզ առևտրական տարանցիկ ճանապարհը: Նախատեսվում էր Կարսի մարզին շնորհել առանձին կառավարման կարգավիճակ կամ, ծայրահեղ դեպքում, միացնել Երևանյան նահանգին:[36]

Գեներալ մայոր Ստարնիցկին Կովկասի փոխարքայի կարծիքի հիման վրա մշակեց տարածքային ընդլայնման երկու նախագիծ: Առաջինը նախատեսում էր 32186 քառ. վերստ տարածության ձեռքբերում՝ Բաթումիի, Արդահանի, Արդվինի, Արտանուջի, Բայազետի, Օլթիի և Կաղզվանի հաշվին: Ըստ երկրորդ նախագծի՝ ձեռք բերվող տարածքը պետք էր ընդլայնել 10067 քառ. վերստով՝ Էրզրումի հարթավայրի և Էրզրումի հաշվին:[37] Ալեքսանդր 2-րդ ցարը հաստատեց առաջին նախագիծը, որը և ուղարկվեց Իգնատևին՝ իրականացման: Գորչակովի հեռագիրն Իգնատևին հրահանգում էր՝ նկատի ունենալով տերության կայսրապետական շահերը, մերժել Օսմանյան Թուրքիայի հայ ազգաբնակչության խնդիրը, բացառել Բուլղարիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի նմանությամբ Արևմտյան Հայաստանի ինքնավարության կարգավիճակը:

Հաշտության ընդհանուր նախագծի մշակման ընթացքում Իգնատևը հաշվի էր առնում Կովկասյան ղեկավարության տեսակետները,[38] սակայն, միաժամանակ, անհրաժեշտ համարեց հաշտության պայմանագրի մեջ մտցնել Օսմանյան Թուրքիայի հայ հոգևորականության և հայկական ազգաբնակչության վրա Էջմիածնի Մայր աթոռի գերիշխանությունը հաստատող կետ: Իգնատևը գտնում էր. «Մեզ համար չափազանց մեծ և ձեռնտու փաստ է ներկայացնում Ռուսաստանի սահմաններում պատրիարքական Մայր աթոռի տեղակայությունը, որպեսզի կարելի լիներ նրա ազդեցությունը զոհաբերել մեր արևելյան քաղաքականությանը»:[39] Այս նպատակով Իգնատևը ցանկանում էր հաշտության պայմանագրի մեջ ներառել. «Հայոց եկեղեցու առաջնորդ Էջմիածնի կաթողիկոսից հոգևոր կախում ունեցող հայերը» պարբերությունը: Էջմիածնի առաջնորդարանի մասին Իգնատևի առաջարկը մերժվեց Թուրքական լիազոր ներկայացուցիչ Սաֆվետ փաշայի կողմից՝ որպես միջամտություն ներքին գործերին:

Չնայած ճանաչում ստացավ Օսմանյան Թուրքիայի հայ ազգաբնակչության «ընդհանուր անվտանգության» պահանջի ապահովումը: Դրա անհրաժեշտության հիմնավորման համար Կոստանդնուպոլսի պատրիարքը սուլթանին զեկուցագիր ներկայացրեց Թուրքահայաստանում տիրող իրավիճակի վերաբերյալ: Դրանում ընդգծվում էր հայ ազգաբնակչության ծայրահեղ վիճակը. «Խաղաղությունն ու անվտանգությունն արդեն վաղուց են վտարվել Հայաստանից»: Չարության և բռնության գործիք էին ներկայացվում քրդերն ու չերքեզները, հարկահանության ժամանակ Թուրքական վարչության գործողությունները, դատավայրությունների ժամանակ հայերի հանդեպ արդարադատության բացակայությունը, դատավորների ծախսվածությունը: Այսուհանդերձ՝ Կոստանդնուպոլսի պատրիարքի բազմաթիվ դիմումները Աբդուլ Համիդին, ինչպես նաև նրա նախորդներին, կարելի է բնորոշել որպես. «ձայն բարբառո հանապատի»: Բռնության դեպքերը քննարկելու իշխանությունների հրամանները ենթափոխվում էին տեղական վարչակարգի կողմից: Ինչպես ընդգծում էր Ներսես Վարժապետյանը, մահմեդականների ու քրիստոնյաների միասնական կառավարական հանձնաժողովի գործունեության գաղափարը սնանկ դուրս եկավ: Կատարելով որոշակի աշխատանք, հանձնաժողովն այդպես էլ չկարողացավ կյանքի կոչել նախապատրաստված զեկույցի եզրակացությունները հայերի վիճակի բարեփոխումների մասին: Առաջարկվում էր միջոցներ ձեռք առնել հայերի պատվի, ազատության և արժանապատվության, սեփականության, այդ թվում՝ եկեղեցիների սեփականության պաշտ-

պանության ապահովման, դպրոցների ու վանքերի գործունեությանն աջակցելու, կառավարական վարչությունների գործունեությունը բարվոքելու համար:[40]

Ինչպես հայտնի է 1878թ. փետրվարի 19-ին կայացած Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրում Օսմանյան Թուրքիայի հայկական ազգաբնակչության «համընդհանուր անվտանգության» հայեցակարգն իր արտացոլումը գտավ 16-րդ հոդվածում: Բարձր Դուռը պարտավորվում էր հայաբնակ մարզերում կենսագործել տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Օսմանյան Թուրքիան 19-րդ հոդվածով պարտավորվում էր Ռուսաստանին հանձնել Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և մինչև Սողանլուի լեռնանցքի տարածքը: 25-րդ հոդվածով նախատեսվում էր պայմանագրի կնքումից և համաձայնագրի երկկողմ վավերացումից հետո՝ վեց ամսվա ընթացքում, ռուսական զորքերի դուրսբերում Ասիական Թուրքիայից, և հայկական վիլայեթներում բարեփոխումների անցկացում՝ ռուսական զինվորական ադմինիստրացիայի հսկողությամբ:[41]

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը նշանակալից արձագանք ստացավ: Իգնատևը կանցլեր Գորչակովին զեկուցեց հայերի սպասելիքների բավարարման մասին. «Սույն հոդվածով լրիվ բավարարվածություն է պատճառվել ամբողջ հայ ազգաբնակչությանը, - նշում էր այդ զեկույցում: - Առաջին անգամ Հայաստան անունն արտաբերվում է միջազգային պայմանագրում, և Բարձր Դռան կողմից ընդունված պարտականությունները կարող են հիմք ծառայել Փոքր Ասիայի քրիստոնեական ազգաբնակչության մեծամասնության վրա մեր հոգատարության տարածման համար... Սույն հոդվածը Եվրոպային կապացուցի, որ Ռուսաստանը մտահոգվում է ոչ միայն բացառապես սլավոնների մասին, նույնիսկ ոչ միայն իր հավատակիցների մասին է հոգում, այլ որ նա, մարդասիրությունից մղված, ի նկատի է ունեցել ապահովել Թուրքիայի քրիստոնեական ամբողջ ազգաբնակչության բարօրությունը»:[42] Այսուհանդերձ հայկական շրջանակներում առկա էր որոշակի անբավարարվածություն: Ռազմավարական տեսանկյունից, հայկական կողմը՝ բալկանյան ժողովուրդների համեմատությամբ չնչին ձեռքբերում ունեցավ, այնինչ Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան ձեռք բերեցին անկախություն, Բուլղարիան հռչակվեց ինքնավար պետություն, Բոսնիայի և Հերցեգովինայի համար նախատեսվեց կիրառել Կոստանդնուպոլսի դեսպանների գագաթնաժողովում ընդունված բարեփոխումների նախագիծը:[43] Այդ պայմաններում Ներսես Վարժապետյանը ստիպված էր հայտարարել. «Քաղաքականության մեջ երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պետք է ընես ինչ որ կրնաս»:[44]

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը հանդիպեց մեծ տերությունների (առաջին հերթին՝ Անգլիայի) հակազդեցությանը, որոնք դրանում տեսնում էին Պետերբուրգյան արքունիքի ազդեցության կտրուկ բարձրացում Բալկաններում և Փոքր Ասիայում: Անգլիան և Ավստրո-Հունգարիան պահանջեցին ռուս-թուրքական հաշտության պայմանագրի վերանայում Եվրոպական վեհաժողովում: Ռուսաստանի արտաքին քաղաքականության գերատեսչությունը միապետի ուշադրությունը հրավիրեց Եվրոպայի դեմ-դիմաց փաստական մենակության վրա: Ավստրո-Հունգարիան ներկայանում էր որպես նոր պատերազմի քողարկված բանսարկու.

«Ավստրիան վարում է երկակի, նույնիսկ՝ եռակի խաղ և դժվարությամբ է զսպում մաջարներին [հունգարացիներին – Մ. Մ.], որոնք պատրաստակամ են մեզանից խզման»: Քաղաքական մակլերի դերում հանդես եկավ Բեռլինը. «Գերմանիան հովանավորում է Ավստրիայի բոլոր նկրտումները և չի համարձակվում մեզ ցույց տալ որևէ էական աջակցություն»:[45] Փարիզը և Հռոմը ստիպված էին հաշվի առնել քաղաքական ուժերի հարաբերակցությունը. «Իտալիան և ֆրանսիան մեզ հետ չեն կարող որևիցէ մտերմական կապի մեջ մտնել այնքան ժամանակ, քանի դեռ մենք նրանցից հրաժարվել ենք երեք միապետների [Ռուսաստան-Ավստրիա-Գերմանիա - Մ. Մ.]՝ միության ստորագրությամբ: Վճռական ախոյանի դերում հանդես եկավ Անգլիան: Դրա պատճառով երաշխավորվում էր Արևելյան հարցում ընդհանուր համաձայնության հանգել Եվրոպայի հետ»:[46]

Օսմանյան Թուրքիայի հայ ազգաբնակչության շահերի արդյունավետ պաշտպանության համար Կոստանդնուպոլսի պատրիարքը որոշում ընդունեց անցկացնել Պետերբուրգի ու Էջմիածնի, Լոնդոնի ու Փարիզի կարծիքների նախնական հարցում: Հուսադրող պահ էր հայկական պատվիրակության այցելությունը Սևծովյան նեղուցները հսկող անգլիական նավատորմիղի հրամանատար դուքս Էդինբուրգցուն, որը Ներսես Վարժապետյանի ներկայացուցիչներին հավաստում էր Եվրոպական վեհաժողովի կողմից հայ ժողովրդի շահերը հաշվի առնելու հնարավորության մասին: Պետերբուրգ ուղարկվեց եպիսկոպոս Խորեն Նար-պեյը, Եվրոպա՝ Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանը:

Եպիսկոպոս Մատթեոս Իզմիրլյանը հայոց եկեղեցու գործերով անվանապես գործուղվեց Մայր աթոռ:[47] Ծովով ժամանելով Օդեսա, Իզմիրլյանը Թիֆլիսով ուղեվորվեց Էջմիածին, որտեղ 1878թ. մարտի 10-ին, ներկայանալով իբրև Օսմանյան Թուրքիայի «հայ ժողովրդի լիազոր ներկայացուցիչ», ունկնդրություն խնդրեց գերագույն կաթողիկոս Գևորգ Դ-ից, բացատրելու համար արևմտահայերի «կյանքի ու մահու» հարցը և ակնկալելով եկեղեցու առաջնորդի բարձր դիրքի գործադրությունը՝ ժողովրդի բարօրության համար:[48]

Գերագույն կաթողիկոսն իր «ղրական վերաբերմունքը» շարադրեց Ներսես Վարժապետյանի քայլի հանդեպ[49] , իսկ Իզմիրլյանին բանավոր կերպով հանձնարարեց հաղորդել հայերի համար թուրքական սուլթանի նախընտրելիությունը՝ ցարի համեմատությամբ: Գերագույն կաթողիկոսի մոտեցումը թելադրվում էր մի քանի նկատառումներով: Նրան արդեն հայտնի էր, որ Աղրիանուպոլսի նախնական 16-րդ հոդվածում նշվող՝ Կովկասին սահմանակից հայկական վիլայեթներին թուրքերի կողմից «Վարչական ինքնավարություն» տալու պարտավորության մասին կետը բացակայում է Սան Ստեֆանոյի պայմանագրում:[50] Բացի այդ՝ ազդեցություն էր գործել, անշուշտ, Կովկասի ղեկավարության և 60-70-ական թվականների ներքաղաքական գերատեսչության՝ Հայոց եկեղեցու առաջնորդի լիազորությունների սահմանափակման կուրսը:[51] Նշանակություն էր ունեցել նաև Օսմանյան Թուրքիայում հայերին՝ ռուսահայերի նկատմամբ ավելի լայն իրավունքներ ապահովող «Սահմանադրության» գործադրությունը:[52]

Խորեն Նար-պեյն ազգային շարժման և հայ հոգևորականության շրջանակներում ներկայացնում էր ռուսական կողմնորոշման ֆրակցիան: Նրա առջև խնդիր էր դրվել Պետերբուրգում պարզել հայկական ազ-

զարնակչություն ունեցող վիլայեթների համար բարեփոխումների բնույթը և ներկայացնել Հայաստանի ինքնակառավարման նախագիծ: Սուլթանական արքունիքին Ներսես Վարժապետյանը նրա մեկնումը ներկայացրեց որպես եպիսկոպոսի անձնական նախաձեռնություն՝ մերժելով տալ հավատարմագիր և սպառնաց բանադրանքով, «եթե ինքը նախապես չստանա Պետերբուրգ մեկնելու համար կաթողիկոսի համաձայնությունը»:

Ծխածածկույթով էր պարուրված Խրիմյանի ուղևորությունը: Թուրքամետ քաղաքականության կողմնակցից նա վերածվել էր եռանդուն անգլոմետի: Խրիմյանի առաքելությունը համաձայնեցվել էր ֆինանսների նախարար Ահմեդ-Վեֆիկ փաշայի և անգլիական դեսպան Լեյյարդի հետ: Սուլթանական կառավարության այդ դիրքորոշումը թելադրված էր հայերի հաշվարկները և մեծ տերությունների ծրագրերն իմանալու ցանկությամբ: Ինչ վերաբերում է սուլթանական պալատին մոտ կանգնած բարձրաստիճան հայ ֆրակցիայի կողմնորոշմանը, որը բացառում էր Ռուսաստանի հետ միանալու ցանկացած միտք, ապա այս դեպքում հաշվի էին առնվում պալատի հետ կապված տնտեսական շահերը և, Անգլիայի հետ համագործակցելու դեպքում, դրանց զարգացման հնարավորությունները: Նպատակ էր հետապնդվում զգալի ինքնավարություն ձեռք բերել թուրքական սուվերենության և անգլիական հովանավորության ներքո: Ընդ որում, հենց այդ «թուրքամետ փոքրիկ ֆրակցիան» էր կազմել և ֆինանսավորել Խրիմյանի պատգամավորական ուղևորությունը:[53]

Փաստորեն՝ բարձրաստիճան հայ հոգևորականության դիվանագիտական մրցասպարեզում գործում էր երկու ֆրակցիա. անգլո-թուրքական՝ Խրիմյանի գլխավորությամբ, և ռուսական կողմնորոշման՝ ի դեմս Նարպեյի: Նրանց համատեղ գործունեությամբ, ահա՝ կազմվում էր Արևմտյան Հայաստանի ինքնորոշմանը հասնելու միասնական քաղաքական գաղափարի ազգային-պահպանողական ուղղությունը: Քաղաքական ներկայացուցչությունների սույն հավասարակշռությունը հնարավորություն էր ընձեռում տրբագրել հայ գործիչների երկու՝ անգլիական և թուրքական[54], կամ, ավելի ստույգ, երեք՝ ռուսական, անգլիական և թուրքական կողմնորոշումների հայեցակետերը:[55] Հայկական ազատագրական շարժման մեջ, ինքնակառավարման հասնելու համար, ի հայտ էր եկել միասնություն, միայն կայացման միջոցներն էին տարբեր: Այս կողմնորոշումների համադրողն, անշուշտ, Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանն էր, որը, լինելով իրատես գործիչ, որպես հայ Մաքիավելի, փորձում էր օգտագործել քաղաքական բոլոր առաջավոր կենտրոնների՝ սուլթանական պալատից մինչև եվրոպական առաջատար մայրաքաղաքների, հնարավորությունները:

Խորեն Նար-պեյը Պետերբուրգում հանդիպումներ ունեցավ կանցլերի օգնական Ն. Կ. Գիրսի և արտաքին քաղաքական գերատեսչության առաջատար այլ աշխատակիցների հետ: Հանդիպում կայացավ նաև Իգնատևի հետ: Նրա կողմից համոզմունք հայտնվեց, որ 16-րդ հոդվածը կարող է իր հետագա ծավալումն ստանալ: 1878թ. մարտի 14-ին Գորչակովը եպիսկոպոսին հայտնեց, որ ինքը և միապետ Ալեքսանդր 2-րդը ցանկանում էին Հայկական հարցին լավագույն լուծում տալ, և միայն Անգլիայի «ստոր» դիրքորոշումը այդ «փամեստ» տարբերակի պատճառը դարձավ: Համաձայնություն տրվեց ընդունել Խորեն Նար-պեյի բերած հուշագիրը:

1878թ. մարտի18-ին Ալեքսանդր 2-րդն ընդունեց Նար-պեյին և իր լավագույն ցանկությունները հասցեագրելով Օսմանյան Թուրքիայի ազգաբնակչությանը, հարցումներ արեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածից բխող ցանկալի բարեփոխումների բովանդակության մասին: Նար-պեյի կարծիքով հայկական զանգվածների վիճակի բարելավման ամենագլխավոր պայման կարող էր հանդիսանալ ռուսական ռազմական ադմինիստրացիայի հսկողության տակ Հայաստանի գեներալ-նահանգապետության ստեղծումը: Ըստ հուշագրում առաջ քաշված առաջարկությունների՝ բարեփոխումներն ընդգրկում էին հարցերի լայն շրջանակ: Նախատեսվում էր սուլթանի համաձայնությամբ Տաճկահայաստանում՝ Ռուսաստանի միապետի կողմից առաջադրվող հայ լուսավորչական դավանանքին պատկանող գեներալ-նահանգապետի (վալի) կառավարում: Ազգությամբ հայ նահանգապետերը և գավառապետերը պետք է ընտրվեին Հայաստանի պատգամավորների խորհրդի և հաստատվեին՝ Բարձր Դռան կողմից: Հայկական պաշտոնական անձանց պետք է վստահվեր կյանքի կոչել մի շարք բարեփոխություններ. արդարադատություն՝ «քրիստոնեական օրենքի» հիման վրա, քրդերի արտոնությունների վերացում, նոր, «ճշմարիտ» հարկահանության իրականացում, Հայաստանում թուրքերի զինաթափում, եկեղեցական ունեցվածքի վիճակի բարելավում, Զեյթունի ինքնավարության ապահովում: Հայաստանի կառավարությունը պետք է Ռուսաստանի հաստատմամբ և հավանությամբ ընդուներ «Կանոնադրություն»: Հայկական կողմն առաջարկում էր հայկական վիլայեթները ձուլել մեկ միասնական վարչական ամբողջության՝ հայկական գեներալ-նահանգապետության (վիլայեթության) մեջ: Ինքնակառավարումը պետք է երաշխավորեին Ռուսաստանը և Օսմանյան Թուրքիան: Զարգացման երաշխիք էին դիտարկվում հայկական վարչակարգը, քաղաքակիրթ օրենքները և արդարադատությունը, ազգաբնակչության էթնիկական բոլոր խմբերի հավասարությունը: Ալեքսանդր 2-րդը հավանություն տվեց Ներսես Վարժապետյանի այդ առաջարկներին. «Լավ, դուք գործեցեք: Աղոթեք, որ ինձ օգնի Աստված»:[56] Քաղաքական անդրկուլիսներում Նար-պեյը վալիի պաշտոնի համար առաջարկում էր գեներալ ադյուտանտ Լոռիս Մելիքովի կամ պետական-քաղաքական գործիչ Նուբար փաշայի թեկնածությունը: Եթե առաջին թեկնածությունը կարող էր ձեռնտու լինել միայն Ռուսաստանին, ապա երկրորդը կարող էր փոխզիջումնային տարբերակ դառնալ նաև Թուրքիայի համար:[57]

1878թ. մարտի 21-ին Խորեն Նար-պեյն իր առաքելության արդյունքների մասին տեղեկացրեց Գևորգ Դ-ին: Նամակում, ի դեպ, նշվում էր Իգնատևի դրական դերը Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի կնքման գործում: Պայմանագրին բարձր գնահատական էր տրվում, քանզի արդյունքում՝ իրականացվել էր Հայաստան հասկացության պաշտոնական գործածությունն Օսմանյան Թուրքիայում, խոստացվել էր անցկացնել «երաշխավորված բարենորոգումներ», և բացվել էր դեպի Պետերբուրգ և առաջատար երկրներ 16-րդ հոդվածի կյանքի կոչման համար միջնորդությունների «դուռը»: Անհասանելի էին համարվում երկու նպատակներ՝ Էջմիածնի Մայր աթոռի պաշտոնական հսկողությունը Օսմանյան Թուրքիայի հայերի վրա և Տաճկահայաստանի ինքնավարության կարգավիճակի ձեռքբերումը: Ալեքսանդր 2-րդ ցարի դիրքորոշումը հայ ժողովրդի նկատմամբ բնորոշվում էր որպես «նրբանկատ և զգուշավոր»:[58]

Հարկ է նշել, որ կոմս Իգնատևը, լինելով իրատես քաղաքագետ, առաջարկում էր Անգլիայի հետ Բեռլինյան վեհաժողովում փոխզիջման հասնել՝ Թուրքիային զիջելով Բայազետի և Ալաշկերտի հովիտները, որ նշանակում էր Պարսկաստանի առևտրական (տրանզիտ) ճանապարհի անձեռնմխելիություն:

Բեռլինյան վեհաժողովում լիազորված անձանց կողմնորոշման «հակիրճ ծրագրում» Իգնատևը նախատեսում էր հայկական նահանգներում ստույգ բարենորոգումների անցկացում. «16-րդ հոդվածի վերանայման ժամանակ Դռնից պահանջել մատնանշել այն բարենորոգումները, որոնք նա կներմուծի Ասիա, հայկական ազգաբնակչությանը քրդերի, չերքեզների և այլոց մոլեգնությունից պաշտպանելու և քրիստոնյա ազգաբնակչության անձնական անվտանգությանը հասնելու համար»:[59]

Այս պարագաները թույլ են տալիս վերանայել այն տեսակետը, որ Նար-պեյը Ռուսաստանում չհասավ որևէ արդյունքի: Եպիսկոպոսի առաքելությունն ավարտվեց ոչ թե «անհաջողությամբ»[60], այլ համեստ հաջողությամբ: Բարենորոգումների որոշման շրջանակներում ռուսական դիվանագիտությունը հնարավորություն ստացավ կողմնորոշվել Նար-պեյի առաջարկություններով:

Հռոմ, Փարիզ և Լոնդոն այցելած Խրիմյանը չհասավ ստույգ արդյունքի: Վարչական ինքնակառավարում խնդրվեց Իտալիայի արտաքին գործերի նախարար կոմս Կորտինիից, որն աջակցություն խոստացավ Բեռլինի վեհաժողովում: Խոստումը կրում էր բարի ցանկության բնույթ, քանզի Իտալիան, որպես նորաստեղծ պետություն, դեռ նոր էր ոտքի կանգնում: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Վադինգտոնին Տաճկահայասաանի վերաբերյալ նարկայացվեց Լիբանանյան կարգավիճակի տարբերակը: Նախարարը պահանջեց ճշտել հայկական վիլայեթների և Կիլիկիայի կազմի մասին տվյալները: Արտաքին գործերի գերատեսչության ղեկավար Սոլսբերին առաջարկեց հույսը ճակատագրի վրա դնել, քանի որ անգլիական նավերը չէին կարող հասնել մինչև Հայաստանի լեռները: Մերժվեց համատեղ գործունեության հույսը Բեռլինի զագաթնաժողովում: Միևնույն ժամանակ, պրեմիեր մինիստր Բիկոնսֆիլդը հավաստիացրեց, որ Անգլիան կպաշտպանի հայերի շահերը: Այս դիրքորոշումը, թերևս, թելադրված էր այն մտավախությամբ, որ հակառակ դեպքում հայերն ամբողջությամբ կգտնվեն Ռուսաստանի հովանավորության ներքո:[61]

Ինչպես հայտնի է 1878թ. հունիսի 13-ից հուլիսի 13-ը կայացած Բեռլինի վեհաժողովին հայկական պատվիրակությունը ներկայացնում էին Խրիմյանը, Նար-պեյը, Ս. Փափազյանը և քարտուղար Մ. Զերազը. սակայն պատվիրակությանը մասնակից չդարձրին վահաժողովի նիստերին: Հայկական հարցի վերաբերյալ վճռորոշ դեր խաղաց Անգլիայի և Ռուսաստանի միջև կայացած համաձայնությունը: Մայիսի 30-ին Շուվալովը և Սոլսբերին Լոնդոնում հուշագիր ստորագրեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման վերաբերյալ: Հայկական հարցն անցնում էր Անգլիայի և Ռուսաստանի վերահսկողության ոլորտ: 7-րդ հոդվածը նշում էր. «Հայաստանի նկատմամբ Սան Ստեֆանոյի պայմանագրով սահմանված պարտավորությունները պետք է վերաբերեն ոչ միայն Ռուսաստանին, այլև Անգլիային»:[62] Թուրքիային վերադարձվեցին Բայազետը և Ալաշկերտի հովիտը, փոխարենը Անգլիան որպես Ռուսաստանի տիրույթ էր ճանաչում «Հայաստանում գրավված հողերը» (հոդ. 11): Անգլիան սուլթանի

հետ դիվանագիտական հաջողությունը զարգացրեց 1878թ. հուլիսի 4-ի անգլո-թուրքական համաձայնագրով: Քրիստոնյա հպատակների վիճակի բարելավման պարտականության փոխարեն Անգլիան ստացավ Կիպրոս կղզին: Անգլիան պարտավորվում էր պաշտպանել Ասիական Թուրքիայի տարածքային ամբողջականությունը՝ Ռուսաստանին թողնելով Բաթումը, Կարսը և Արդահանը:[63]

Փաստորեն՝ անգլիական դիվանագիտությունը Բեռլինի վեհաժողովում հաղթանակ տարավ: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով, էական տարբերությամբ՝ հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցնում էին մեծ տերությունների հսկողության ներքո:[64] Հայկական պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել վեհաժողովի աշխատանքներին, ինչպես և չքննարկվեց պատվիրակության կողմից ներկայացված գեներալ-նահանգապետության նախագիծը: Բացասաբար էր դիտվում հայկական պատվիրակությունում հոգևորական անձանց առկայությունը, որը, իբր, սահմանափակում էր Հայաստանի քաղաքական ներկայացուցչությունը:[65] Հաշվի չառնվեց նաև Նուբար փաշայի նախագիծը, որ նախատեսում էր «Էրմենիստանի» վալու ընտրություն՝ հայ լուսավորչականներից: Եվրոպական տերությունների այդ մոտեցումը պատճառաբանվում էր, իբր, պատերազմական գործողություններին փոքրասիական հայերի նվազ մասնակցությամբ՝ ռուսահայերի ներդրումը համարվեց աննշան: Իրականում որոշիչ դեր խաղաց Անգլիայի և Թուրքիայի բացասական դիրքորոշումը, որի արդյունքում քաղաքական համաձայնության կնքման ժամանակ հայկական պատվիրակությունը մնաց դատարկաձեռն:[66] Որոշվեց պայքար սկսել բարեփոխումների համար, որոնք պետք է հասցնեին ինքնակառավարման: Վեհաժողովի ընդհանուր արդյունքից դժգոհ էր Ներսես Վարժապետյանը, քանի որ 61-րդ հոդվածում չկային ո՛չ Հայաստան, ո՛չ Հայկական նահանգ հասկացությունները, և նրա ճնշման ներքո հայկական պատվիրակությունը բողոք ներկայացրեց Բեռլինի վեհաժողովին:

Ընդհանրացնենք. հայ հասարակայնության բոլոր խավերը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ձգտում էին Տաճկահայաստանում հասնել Բալկանյան թերակղզու սլավոններին տրված վերափոխումների օրինակով կազմավորման իրականացմանը: Եվ այդ նպատակին հասնելու համար քաղաքական և դիվանագիտական ասպարեզում ակտիվություն էր հանդես բերում Հայոց եկեղեցին, ընդ որում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն, հաշվի առնելով մեծ քաղաքականության հնարավոր հետևանքները, զուսպ դիրք գրավեց, իսկ Կոստանդնուպոլսի պատրիարքը, ստանալով Ազգային ժողովի օժանդակությունը, իրատեսական ու գործնական քաղաքական-դիվանագիտական գործունեություն ծավալեց: Եվ չնայած բեռլինյան համաժողովից հայկական պատվիրակության սպասումները չարդարացան, այսուհանդերձ բեռլինյան համաձայնագիրը հայ հոգևորականության կողմից գնահատվեց որպես Թուրքիայի կազմում Արևմտյան Հայաստանի ինքնավարության ձեռքբերման առաջընթաց քայլ: Հայ հոգևորականությունը կարողացավ արտահայտել Արևմտյան Հայաստանի ինքնակառավարման հասնելու ազգային սպասումները և ըստ հնարավորինս իր անմիջական մասնակցությունը բերել ազգային զարթոնքի գործընթացին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Архив внешней политики России (АВПР), ф. 6, оп. I, д. 6481, л.3.
[2] Там же, л. 2-4.
[3] Российский государственный военно-исторический архив (РГВИА), ф. 1300, оп. 18, д. 10, л. 6.
[4] Там же, л. 1-8, 27,39,41.
[5] Официальная часть. – "Кавказ". 1876, 16 июля.
[6] Местная хроника. – "Тифлисский Вестник". 1877, 6 августа.
[7] Зверства турок в Армении. – Там же, 11августа.
[8] Геноцид армян в Османской империи. Под ред. М. Г. Нерсисяна. 2-изд. Ер., 1983, N 3, с. 4.
[9] Там же, с. 5.
[10] Հայաստանի Հանրապետության Պետական կենտրոնական պատմական արխիվ (ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 57, ց. 1, գ. 191, թ. 1-3 հակ.:
[11] РГВИА, ф. 1, оп. 1, д. 31642, л. 2.
[12] Институт народов Азии Академии наук Российской Федерации (ИНА АН), ф. 58, оп. 1, д. 264, л. 9Л7.
[13] Сборник договоров Росии с другими государствами 1856-1917 годов. М., 1952, N 1, с. 23-25.
[14] Ավագյան Ռ. Գ. 1863թ. Հայոց Ազգային Սահմանադրություն (Օսմանյան Միապետություն), Հայ իրավական մտքի գանձարան, Եր., 2002, էջ 543-553:
[15] Նույն տեղում, էջ 544-549:
[16] Рукописный отдел Национальной библиотеки Российской Федерации (РО НБ), ф. 169, п. 38, ед. хр. 49, л.1-2.
[17] ИНА АН, ф. 58, оп. 1, д. 103, л. 1-2.
[18] Там же, д. 118, л. 2-4.
[19] Там же, д. 226, л. 1-2.
[20] Там же, д. 135, л. 2.
[21] Там же, оп. 2, д. 1454, л. 52.
[22] Тунян В. Г. Россия и Армянский вопрос Ер. 1998, с. 69.
[23] РГВИА, ф. 1300, оп. 1, д. 21, л. 2, 2 об. Ա. Շիրվանզադե. Արքեպիսկոպոս Մատթեոս Իզմիրլյան. «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» գրքում, Եր., 2001, գիրք 8, էջ 27:
[24] РГВИА, ф. 1300, оп. 17, д. 20, л. 1-2; д. 21, л. 3-6.
[25] Սարուխան. Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860- 1910), Թիֆլիս, 1912, էջ 259-266:
[26] РГВИА, ф.1300, оп.17, д. 26, л. 4-5.
[27] РГВИА, ф. 1300, оп. 17, д. 26, л. 5 об.
[28] Местная хроника. – "Тифлисский Вестник". 1878, 5 февраля.
[29] Военное обозрение. – "Русский Вестник". 1878, т. 133, No 2, с. 992.
[30] Сан-Стефано. Записка графа Н. П. Игнатьева. – "Исторический Вестник". 1915, т. 140, с. 52.
[31] Военное обозрение..., с. 993, 994.
[32] Саркисян Е. К. Политика Османского правительства в Западной Армении. Ер., 1972, с. 88.
[33] Сан-Стефано..., с. 58.
[34] Саркисян Е. К. Политика Османского правительства..., с. 89.
[35] Сан-Стефано..., с. 52.
[36] Там же, т. 140, No 7, с. 794.
[37] Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф. 677, оп. 1, д. 517, л.1-3.
[38] Сан-Стефано..., т. 140, No 7, с. 794, 797.

[39] Мегрелидзе Ш. В. Вопросы Закавказья в истории русско-турецкой войны 1877-1878 гг. Тб., 1969, с. 85, 86, 88.
[40] ИНА АН, ф. 58, оп. 1, д. 115, л. 1.
[41] Зарубежные известия. – "Кавказ". 1878, 25 февраля.
[42] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում: Կազմ. Կիրակոսյան Ջ. Ա., Սահակյան Ռ. Գ., Եր., 1972, թիվ 4, էջ 92, 93, 96, 97:
[43] ГАРФ, ф. 677, оп. 1, д. 623, л. 2.
[44] Հայաստանը.... փաստաթղթերում, թիվ 4, թ. 84-92:
[45] Սարուխան. Հայկական խնդիրն և..., թ. 294:
[46] РО НБ, ф. 169, п. 38, ед. хр. 41, л. 2.
[47] Там же, л. 3.
[48] Местная хроника. – "Тифлисский Вестник". 1878, 5 марта.
[50] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. 8, թիվ 7, էջ 48:
[51] Սարուխան. Հայկական խնդիրն..., էջ 324:
[52] Նույն տեղում, էջ 294:
[53] Тунян В. Г. "Положение" Армянской церкви. Ер., 2001, с. 126-129.
[54] ИНА АН, ф. 58, оп. 2, д. 1546, л. 5 об.
[55] Армянский вопрос. – "Тифлисский Вестник". 1878, 30 марта.
[56] Мегрелидзе Ш. В. Вопросы Закавказья в истории русско-турецкой..., с. 134.
[57] Կոստանդյան Է. Ա. Սկրտիչ Խրիմյան, Եր., 2000, էջ 237, 238:
[58] Ներսիսյան Մ. Գ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ., Եր., 1955, Հավելված, թիվ 18, էջ 427:
[59] Բաղալյան Խ. Հ. «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878թ., Եր., 1955, էջ 121-125:
[60] Ներսիսյան Մ. Գ. Հայ ժողովրդի ազատագրական..., թիվ 18, էջ 425-428:
[61] Сан-Стефано..., т. 144, No 4, с. 45.
[62] Мегрелидзе Ш. В. Вопросы Закавказья..., с. 124.
[63] Բաղալյան Խ. Հ. «Հայկական հարցը...», էջ 100-102:
[64] Анучин Д. Г. Берлинский конгресс 1878 г. – «Русская Старина». 1912, т. 149, с. 247.
[65] Там же, с. 246-248.
[66] Հայաստանը... փաստաթղթերում, թիվ 5, էջ 99-102, թիվ 6, էջ 104, 105, թիվ 7, էջ 123:
[67] ГАРФ, ф. 672, оп. 1, д. 519, л. 4-5.
[68] Ռաֆֆի. Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ, Եր., Երկ. ժող., հ. 11, էջ 287:

Резюме

Армянский вопрос и Армянская церковь 1877-1878гг.

Микаел Минасян

Русско-турецкая война 1877-1878гг. повудила все слои армянского общества выступить за осуществление преобразований в Турецкой Армении на уровне славян Балканского полуострова. На политическом и дипломатическом поприще активность проявило руководство Армянской церкви. Верховный католикос Геворк IV занимал сдержанную позицию, учитывая возможные последствия большой политики для армян Османской Турции. Прагматическую и дееспособную политико-дипломатическую функцию осуществил Костантинопольский патриархат при содействии Национального собрания. Благодаря активности армянской стороны, вопреки первоначаль-

ным наметкам европейских стран, в мирный договор между Россией и Турцией оказалась включенной сперва 16-ая статья, а затем – 61-ая. Берлинский трактат был оценен армянскими церковными деятелями как шаг к преобретению автономии Западной Армении в составе Османской Турции. Армянское духовенство сумело выразить национальные чаяния по достижению самоуправления Западной Армении.

Summary

Armenian Question and Armenian Church 1877-1878.

Mikayel Minasyan

Russian-Turkish war in 1877-1878 induced all sections of Armenian society to stand for transformation in Turkish Armenia on the level of Slavs of Balkan peninsula. In political and diplomatic fields the leadership of Armenian Church showed its activity. The Supreme Catholicos Gevork the IV took a constrain position, taking into consideration possible consequences of big politics for Armenians of Ottoman Turkey. The patriarchy of Constantinople with assistance of National Assembly implemented pragmatic and capable political-diplomatic function. Owing to activity of Armenian party, regardless preliminary outline of European Countries, firstly the Article 16 and later the Article 61 were included in the Peace Treaty between Russia and Turkey. Armenian spiritual figures considered Berlin tractate as a step to acquisition of autonomy of Western Armenia, which was in the structure of Ottoman Turkey at that time. Armenian clergy could show national expectations on achievement of self-government of Western Armenia.